

**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը Աշտարակի
Պերճ Պրոշյանի անվան դպրոցում՝ Վերջին զանգի կապակցությամբ**

Շնորհավորում եմ մեր սիրելի 18 աշակերտներին, սիրելի դասուցիչ ընկեր
Ղազարյանին, ուսուցիչներին, կոլեկտիվին, ծնողներին, ՀՀ բոլոր
շրջանավարտներին այս տոնական օրվա առիթով:

Կյանքը դիպված է, այսօր վերջին զանգի խոսքս ուղղում եմ դասերս՝ Հեղինե
Ղազարյանին, ում դասուցիչական դասարանում դասավանդեցի հայոց պատմություն
և համաշխարհային պատմություն: Որպես 31 տարվա մանկավարժ, ուրախ եմ,
որ իմ շատ շրջանավարտներ ընտրել են ուսուցչի մասնագիտությունը: Երջանկանում
եմ, երբ դասարանիդ աշակերտների մասին խոսելիս միշտ ասում ես իմ
երեխաները: Թող որ նրանք կյանքում պահեն իրենց եսը, չփոխվեն, այլ զարգանան
ու հպարտության առիթներ տան Ձեզ, բոլորիս:

« Որպեսզի լավ մայր լինես, պիտի հետաքրքիր լինես, պիտի զարգանաս»:

«Երբ կանայք կրթված են ավելի ակտիվ են և բաց»:

Ուզում եմ, որ Ձեր օրինակին հետևելով մեր շրջանավարտներից ընտրեն ուսուցչի
մասնագիտությունը և ստանձնեն այս պատասխանատու ու սիրելի աշխատանքը՝
սերունդներին կրթելու ու դաստիարակելու գործը:

26.05.2017թ.